ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ -1 Ե-9358

«14» նոյեմբերի 2022թ.

«ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ԴԻԱՆՆԱ ԴԻԼԱՆՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենացի 2 նրբ. 38տ.

Հարգելի տիկին Դիլանյան,

Հայտնում ենք, որ համաձայն Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 2022 թվականի մարտի 16-ին կնքված թիվ ԴԴ-ԷԱՃԾՁԲ-22/02-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N 2 հավելվածի՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թ-ի դեկտեմբերի 20-ը: Ընդ որում, յուրաքանչյուր պատվերի կատարման համար վերջնաժամկետ է սահմանվում տվյալ պատվերի ձևավորման համար գրավոր ձևով հայտ ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրը, իսկ առաջին պատվերի դեպքում՝ 21-րդ օրացուցային օրը: Նշվածով պայմանավորված մարտ ամսից սկսած Ձեզ գրավոր ներկայացվել են հայտեր, որոնցից մի մասը մատակարարվել են, իսկ մնացածը մայիս ամսից սկսած անընդհատ Ձեր կողմից բանավոր ներկայացվել են տարբեր բնույթի պատճառաբանություններ՝ կատարման ժամկետների երկարաձգման մասով, որը մեր կողմից ընդառաջվել է: Հաշվի առնելով, որ Ձեր կողմից տվյալ չափաբաժնի մասով մայիս ամսից սկսած մատակարարումներ չեն իրականացվել, ուստի Դատական դեպարտամենտի կարիքների բավարարման ապահովման նպատակով 27.10.2022թ. թիվ ԴԴ-1-Ե-8882 գրությամբ (կցվում է) տեղեկացվել է Ձեզ, որ Պայմանագրով նախատեսված տպագրական և առաքման ծառայությունների 1-ին չափաբաժնի մասով՝ ծառայությունները

մատուցելու համար տրվում է լրացուցիչ 10 աշխատանքնային օր՝ պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետերի պահանջները՝ 11.11.2022թ. Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱՅ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ յոթ հազար ինը հարյուր երեսունյոթ (7937) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 5.3 կետի համաձայն և ութ հազար վեց հարյուր իննսունմեկ (8691) ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 5.2 կետի համաձայն: Միաժամանակ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ. մասանավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել մեկ հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր երեսուներկու (173832) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել երկու հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր քառասունութ (260748) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Ասատրյան
Հեռ. 010511777